Նապաստակներն անտառում

Նապաստակները թաքնվել են անտառում։ Պետք է բոլորին գտնել։ Միայն թե անտառն իրենից ներկայացնում է անգլերեն մեծատառերից և փոքրատառերից կազմված տող։ Իսկ նապաստակն անգլերեն rabbit բառն է, որի տառերը տողում պարտադիր չէ, որ հաջորդաբար և միասին լինեն։ Նապաստակների տառերը ցրված են տող-անտառում։ Հարկավոր է գրել ծրագիր, որը հաշվի անտառում թաքնված նապաստակների քանակը։
Ավելի ֆորմալ՝ պետք է հաշվել, թե մուտքային տողում տրված տառերից քանի rabbit բառ կարելի է կազմել։ Ընդ որում, բառերի տառերից ցանկացածը կարող է լինել ոչ միայն փոքրատառ, այլև մեծատառ։

Մուտքային տվյալներ

Տրված է մինչև 1024 երկարության անգլերեն տառերից կազմված տող։

Ելքային տվյալներ

Արտածել մեկ թիվ՝ տրված տողում նապաստակների քանակը։

Օրինակներ

Մուտք	Ելք
BRaaibtbritBTsOplr	2
RBaitt	0